

ԵԼԻ ՆՈՐԱՆ

Յ. ՅԱԿՈԲ ԵԱՆԻ

Այս, դու էիր, որ արմատախիլ
Արեցիր մատաղ կեանքիս ծաղիկը.
Դու էիր, որ քո անմիտ վարժունքով
Երգչիս դարձրիր քո խաղալիքը:

Եւ ուրախ էիր, որ քո դիւթական
Քմահաճութեամբ մի սիրտ մաշեցիր,
Դու յետ չգարձար նայելու անգամ
Որչափ անողորմ ինձ հետ վարւեցիր:

Եւ չ'ցաւեցիր, որ անխնայ ձեռքով
Քարուքանդ արիր սրտիս վատակներ,
Ուր ցայտում էին անմեղ հոսանքով
Ազնիւ ձգտումներ, սուրբ նպատակներ:

Ասա գէթ հիմա, երբ սիրտ ինձ խղճառ
Այս կորսաւաբեր ցաւից փրկելու,
Լուռ տանջող երգչիս երբ պիտի յոյս տառ
Մեր սիրոյ դաշն կրկին կապելու:

Օ... այն ժամանակ, եթէ իմանաս,
Որպէս պիտ տօնեմ իմ վերածնութիւն,
Որպէս պիտ դրկեմ, սիրովդ ներշնչւած
Նոր կեանք խոսուացող, աշխարհ, բնութիւն...: